

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-15

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈւԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

«26» հունվարի 2022թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը, ի դեմս տնօրենի Ժամանակավոր պաշտոնակատար Ալվարդ Անտոնյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ **216 763 900 (երկու հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և *կատարողների մասին տեղեկությունները* ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2. Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3. ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Ծրագիրը կատարել անձամբ,

- 2.4.2. Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5. աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,
- 2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7. Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,
- 2.4.8. իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,
- 2.4.9. Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,
- 2.4.11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:
- 2.4.12. Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է՝ **216 763 900 (երկու հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումար**

4. Մոնիթորինգ

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄՍԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:


10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղդասյան պող., 24

ՀՎՀՀ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ա. Սադյան



(ստորագրություն)



ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան
կենսաքիմիայի ինստիտուտ
ք. Երևան, Պ.Սևակի փող. 5/1

ՀՎՀՀ 00009794

Երևանի թիվ 1 ՏԳԲ

h/h 900018005463

Տնօրենի ժամ. պաշտոնակատար՝
Ալվարդ Անտոնյան



Ծրագրի գիտական ղեկավար՝



(Սամվել Զախյան)

Հավելված 1
«26» հունվարի 2022 թ.
N 2-15 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում
կյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման
գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ,
մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի
նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների
հայտնաբերումը” ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ալվարդ Անտոնյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «26 հունվարի 2022 թ. N 2-15 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 216 763 900 (երկու հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումար

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

ՀՎՀՀ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ա. Սաղյան

(ստորագրություն)



ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան
կենսաքիմիայի ինստիտուտ
ք. Երևան, Պ.Սևակի փող. 5/1

ՀՎՀՀ 00009794

Երևանի թիվ 1 ՏԳԲ

հ/հ 900018005463

Տնօրենի ժամ. պաշտոնակատար՝

Ալվարդ Անտոնյան



Ծրագրի գիտական ղեկավար

(Մամվել Զախյան)

ԱՌԱՋԱՐԴԱՆՔ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը Ծրագրի նպատակը և այդ նպատակին հասնելու համար առաջադրված խնդիրները օրգանիզմում նյութափոխանակության հետազոտումն է նորմայում և տարբեր ախտաբանական վիճակներում: Շարունակվելու են կենսաբանորեն ակտիվ միացությունների ազդեցությունների հետազոտությունները նյարդադեգեներատիվ, քաղցկեղային, վարակիչ, աուտոիմուն և բորբոքային հիվանդությունների հիմքում ընկած նյարդաքիմիական և կենսաքիմիական մեխանիզմների պարզաբանման նպատակով և առաջարկվելու են հիվանդությունների կանխարգելման, բուժման տարբեր մոտեցումներ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները Հետազոտությունները իրականացվելու են պայմանագրում բերված աշխատանքի բովանդակության, օրացուցային պլանի համաձայն: Աշխատանքները իրականացվելու են ժամանակակից կենսաքիմիական, հիստոքիմիական, իմունոլոգիական մեթոդներով՝ բարձր արդյունավետության հեղուկային քրոմատոգրաֆիա, մասս-սպեկտրալ անալիզ, կլանման և ֆլուորեսցենտային սպեկտրասկոպիա, սպիտակուցների անջատման և մաքրման քրոմատոգրաֆիա և հել ֆիլտրացիա, քեմիլումինեսցենտային անալիզ, պրոտեոմիկի մեթոդներ, իմունոաֆերմենտային անալիզ (ELISA), քաղցկեղի բջիջների ֆոտոդինամիկ թերապիա:

4. Աշխատանքի բովանդակությունը.

Իրականացվելու են նյութափոխանակության համար կարևոր նշանակություն ունեցող կենսաբանական ակտիվ միացությունների ազդեցությանը վերաբերող հետազոտություններ նորմայում և տարբեր հիվանդությունների դեպքում: Աշխարհում աճել են նյարդադեգեներատիվ, ուռուցքային և առանձնապես շաքարախտով հիվանդությունները և այդ առումով առավել կարևորվում են այն հետազոտությունները, որոնք այս կամ այն չափով կնպաստեն այդ հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման գործընթացին:

Պրոլինով հարուստ պեպտիդները (գալարմին և ածանցյալներ) լինելով 39 ամինաթթվից բաղկացած կոպեպտինի C-ծայրը, որը վազոպրեսին-նեյրոֆիզին-կոպեպտին նախահորմոնի բաղադրիչն է: Կոպեպտինի ֆունկցիան կաթնասունների

օրգանիզմում առայժմ անհայտ է, իսկ նրա բաղադրիչ գալարմինը ցլի ուղեղից անջատվել և ֆիզիկաքիմիապես ու բազմապիսի կենսաբանական ակտիվություններով հանդերձ երկար տարիների ընթացքում հանգամանորեն բնութագրվել է ակադ. Ա. Գալոյանի գլխավորած և այժմ էլ գործող գիտական մեծ խմբի կողմից:

Չնայած արդեն իսկ կուտակված գիտական բազմաշերտ ինֆորմացիային, գալարմինի և ածանցյալների ազդեցության բուն մեխանիզմները մնում են չպարզաբանված: Շարունակվելու է գալարմինի և ածանցյալների ազդեցության մեխանիզմների բացահայտմանն ուղղված հետազոտությունների շարքը: Նախատեսվում է շարունակել գալարմինի և ածանցյալների ազդեցության մեխանիզմների բացահայտմանը միտված հետազոտությունները վիրտուալ տիրույթում (ուսումնասիրել գալարմինի և ածանցյալների հնարավոր փոխազդեցությունն այն ռեցեպտորների հետ, որոնք կապ ունեն մինչ այժմ հայտնաբերված կենսաբանական ակտիվությունների հետ), ինչպես նաև շարունակել գալարմինի և ածանցյալների կիրառական ասպեկտների բացահայտումը տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների բնագավառում: Հետազոտվելու է արյան պլազմայի ֆիբրինոլիտիկ ակտիվության փոփոխությունը փորձարարական շաքարային դիաբետով հիվանդ առնետներին ամինաթթվային կոմպլեքսով բուժելու դեպքում:

Վերջին տարիներին գրանցվել և հաջողությամբ կիրառվում են մի շարք դեղամիջոցներ, որոնք բաղկացած են ամինաթթվային կոմպլեքսներից: Ծրագրվում է ուսումնասիրել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում արյան պլազմայի ֆիբրինոլիտիկ համակարգում պրոֆ. Ռ. Քամայանի և աշխատակիցների կողմից կիրառված ամինաթթվային կոմպլեքսը որպես բուժման միջոց օգտագործելիս: Հետազոտությունները իրականացվելու են Սպոնտան էուզլոբուլինային և Հագենան (ՖXII) – կալիկրեին կախյալ ֆիբրինոլիզի մեթոդներով, որոնք թույլ կտան գնահատել ֆիբրինային մակարդուկի քայքայման արտաքին և ներքին մեխանիզմների փոփոխությունները: Ակնկալվում է հիվանդության ընթացքում առաջացած արյան պլազմայի ֆիբրինոլիտիկ համակարգում տեղի ունեցող խախտումների բարելավում:

Շարունակվելու են փորձարարական ինսուլտի և գլիոբլաստոմայի ուսումնասիրությունները կարգավորիչ և պրոօքսիդանտային ու վերականգնողական գործընթացները խթանող ֆերմենտներ ֆոսֆոդիբոզիլ պիրոֆոսֆատի և քսանտին օքսիդազի ակտիվությունների որոշմամբ՝ դրանց նոր, ավելի արդյունավետ էֆեկտորների ազդեցության միջոցով: Այս ֆերմենտների ակտիվությունները դիտարկվելու են նաև դիագնոստիկ տեսանկյունից, վաղ քաղցկեղի հայտնաբերման նպատակով: Դիտարկվելու է նաև մագնիսական դաշտի ազդեցությանը ինսուլտի ուշ փուլերի վրա: Չափվելու են կեղևային պլիքային փոփոխությունները, որպես բուժման առաջընթացը արտացոլող ցուցանիշներ:

Տարբեր պաթոլոգիաների ու հիվանդությունների ժամանակ (ծանր մետաղական թունավորում, շաքարախտ) կորոշվեն սպիտակ առնետների հյուսվածքների (արյուն, ուղեղ, թոք, ոսկրածուծ և այլն) բջջաթաղանթներից, կորիզների ու միտոքոնդրիումների թաղանթներից ՆԱԴՓH պարունակող սպիտակուցային բաղադրամասից (ՆՍԲ) ու ՆԱԴՓH օքսիդազից (Nox) կազմված՝ սուպերօքսիդ-գեներացնող ասոցիատի (ՆՍԲ - Nox) իզոնների և դրա առանձնացված ու հակաօքսիդանտային ակտիվությամբ օժտված ՆՍԲ-ի

իզոնների, որպես իմունախթանիչների որակական և քանակական փոփոխությունները, դիտարկելով դրանք որպես նոր և զգայուն ախտորոշիչ թեստեր:

Շարունակվելու են արթորիտների և շաքարային դիաբետի կանխարգելման և բուժման այլընտրանքային մոտեցման վերաբերյալ հետազոտությունները:

Նախորդ արդյունքների հիման վրա շարունակվելու և ընդլայնվելու են ՌԱ հիվանդների սինովիալ հեղուկներում ԱԴԱ-ի ակտիվության վրա սինթետիկ և բնական արգելակիչների ազդեցության ուսումնասիրությունները: Տարբեր արթորիտների սինովիալ հեղուկներում գնահատվելու է ԴՊՊԿ-ի սկզբնական ակտիվության, դրա նկատմամբ աուտոհակամարմինների և ԱԴԱ ակտիվության հարաբերակցությունը:

Մեր նախորդ փորձերում շաքարախտի ալոքսանային մոդելում կենդանիներին համակցված տրվել է ԳԱԿԹ-ը, դրա հոմոլոգ β -ալանինը և ԳԱԿԹ-տրանսամինազի արգելակիչ էթանոլամին-Օ-սուլֆատը, ինչը կանխարգելում է հիպերգլիկեմիայի առաջացմանը: Շարունակելու ենք այս կոմպլեքսային մոտեցումը հիպերգլիկեմիկ կենդանիների բուժման նպատակով, ինչպես նաև բնական միջոց՝ ասպարագինով հարուստ գայլուկի կոնների ջրային թուրմի ազդեցությունը հիպերգլիկեմիայի դեպքում:

Նախատեսվում է որոշել ԱԴԱ-ֆերմենտի և դրա իզոնների (ԱԴԱ1 և ԱԴԱ2 իզոֆերմենտների) ակտիվության շեմը շաքարային դիաբետի և ուղեկցող ոչ դիաբետիկ հիվանդությունների (միկոզների) դեպքում: Հետազոտվելու է Հայաստանի որոշ դեղաբույսերի էթերայուղերի հակասնկային ազդեցությունը տարբեր պաթոլոգիայով (հիմնականում՝ շաքարային դիաբետով) հիվանդների կենսանյութից անջատված *Candida* ցեղին (հիմնականում *Candida albicans* տեսակին) պատկանող կլինիկական շտամների վրա, որոշվելու է դրանց հակասնկային ազդեցության նվազագույն շեմը:

Նոր համալիր հակաշաքարախտային դեղամիջոցների մշակման նպատակով հետազոտվելու է հեմորֆինների հակաշաքարախտային ազդեցությունը: Մեր կողմից բացահայտվել է, որ LVV-հեմորֆին-3-ը մկան գլխուղեղում կարգավորում է նեյրոդեգեներատիվ հիվանդությունների պաթոֆիզիոլոգիայում ներգրավված մի շարք սպիտակուցների մակարդակը, այդ թվում՝ Պարկինսոնի հիվանդության (ՊՀ) հետ կապված NADH դեհիդրոգենազը (Ndufs3), DJ-1 գենի սպիտակուցը, SOD1, ապոլիպոպրոտեին E և այլն: Ուստի, հետազոտվելու է հեմորֆինների ազդեցությունը նեյրոդեգեներատիվ հիվանդությունների, մասնավորապես, ՊՀ պաթոֆիզիոլոգիայում, հաշվի առնելով, որ ախտաբանական գործընթացներում հեմորֆինների ազդեցության մոլեկուլային մեխանիզմները ներառում են Ca^{2+} -կախյալ պրոտեազները, կալպաինը, կասպազ-3-ը, որոնք կարևոր դեր ունեն ողնուղեղի նեյրոդեգեներացիայի գործընթացներում փորձարարական ՊՀ պայմաններում:

Իրականացվելու են հետազոտություններ՝ պարզելու ՈւՄ ճառագայթների և էլեկտրական հոսանքի կողմից կենսաբանական տարբեր համակարգերում ինդուկցվող ազատ ռադիկալների ազդեցությունը թաղանթային կառույցներում ընթացող օքսիդանտային պրոցեսների վրա: Ուսումնասիրվելու են նաև որոշ նեյրոակտիվ միացություններ (գալարմին, մեսեդին, լոզարտան) որպես հակաօքսիդանտային միացություններ այդ պրոցեսներում: Կատարվելու է համեմատական տեսական վերլուծություն էլեկտրաբուժության ժամանակ դիտվող էլեկտրապորացիայի ցուցանիշների հետ:

Քիմիաթերապիայի բացասական հետևանքները վերացնելու և պրոցեսի արդյունավետությունը մեծացնելու նպատակով նախատեսվում է ստեղծել դեղամիջոցների տրանսպորտային համակարգ հիմնված տարբեր տիպի նանոմասնիկների վրա, որոնք բեռնված կլինեն կոնկրետ դեղամիջոցով մի կողմից, իսկ մյուս կողմից կպարունակեն քաղցկեղ ճանաչող մոլեկուլներ, որոնք թիրախային կազդեն միայն քաղցկեղային բջիջների վրա: Քանի որ քաղցկեղային բջիջները բնորոշվում են աբեռնատային գլիկոզիլացումով, ապա նպատակահարմար է, որպես քաղցկեղ ճանաչող մոլեկուլներ օգտագործել լեկտիններին, որոնք հանդիսանում են տարբեր տիպի շաքարներ կապող սպիտակուցներ: Որպես դեղամիջոցների տեղափոխման բուն տրանսպորտային միջոց նախատեսվում է օգտագործել ինչպես տարբեր տիպի նանոմասնիկներ, այնպես էլ որոշ սպիտակուցներ:

Մուրացան հիվանդանոցի և Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի հետ համատեղ նորահայտ և տևական 1-ին տիպի շաքարային դիաբետով (ՏԻԾԴ) հիվանդների շրջանում (12-25 տարեկան) հետազոտվելու է Narimax forte պրոբիոտիկների կոմպլեքսով աղյուվանտային բուժման (ինսուլինի հետ համատեղ) ազդեցությունը իմունակութափոխանակության մեխանիզմների վրա և դրանց փոխկապվածությունը գլիկեմիկ ստատուսի և միկրոբիոտայի փոփոխությունների հետ:

Narimax forte պրոբիոտիկների կոմպլեքսով բուժումից առաջ, վերջում՝ 5 շաբաթ և հաջորդ 6 և 18 շաբաթ հետո հիվանդների պերիֆերիկ արյան լեյկոցիտների բջջապլազմայում և միտոքոնդրիոմներում ուսումնասիրվելու են L-արգինինի նյութափոխանակությունը և օքսիդատիվ պթերսը, միտոքոնդրիոմների դեէներգիզացիան:

Աղիների և ուղեղի փոխազդեցությունների՝ այսպես կոչված աղիներ- ուղեղ առանցքին վերաբերող հետազոտությունների նպատակով ուսումնասիրվելու են որոշ միկրոբների, մասնավորապես E.coli-ի ազդեցությունը հեմորրագիկ ինսուլտի ժամանակ, քանի որ աղիքային ցուպիկը հեշտությամբ հաղթահարում է հեմատոէնցեֆալիկ պատնեշը և իր որոշակի դերն ունի արյան մեջ տրանսպոկացիայի, ինչպես նաև սեպսիսի դեպքում:

Հետազոտվելու են ողնուղեղի նեյրոդեգեներացիայի կանխարգելման ուղիները փորձարարական Պարկինսոնի՝ ՊՀ, հիվանդության ժամանակ: Հետազոտությունները կատարվելու են ռոտենոնով հարուցված ՊՀ-ի փորձարարական մոդելի՝ առնետների վրա: Նախատեսվում է շարունակել Ca^{2+} -կախյալ ազդանշանային ուղիների ուսումնասիրությունները գլխուղեղում և ողնուղեղում փորձարարական ՊՀ-ի ժամանակ, և զուգահեռ ստուգել մի շարք սինթետիկ և բնական նյութերի կանխարգելիչ ազդեցությունը այդ ուղիների մոլեկուլային բաղկացուցիչների վրա:

Հետազոտվելու է պորֆիրինների և ֆոլաթթվի ոչ կովալենտ կոմպլեքսագոյացումը ուռուցքների ֆոտոդինամիկ թերապիայի համար: Այդ նպատակով հետազոտվելու է ֆոլաթթվի կապվելը տարբեր պորֆիրիններին, մշակվելու չկապված միացություններից մաքրման մեթոդ և ստացվելու է պորֆիրինի կոմպլեքսը ոչ կովալենտ կապված ֆոլաթթվի հետ:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդված, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում, գրքի զլուխ կամ հոդված ժողովածուում:

Տնօրենի ժամ. պաշտոնակատար



(Ավարդ Անտոնյան)



Ծրագրի գիտական ղեկավար՝



(Սամվել Զախյան)

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	176136.0	35227.2	44034.0	44034.0	52840.8
2	տնտեսական և այլ ծախսեր	40627.9	8125.6	10157.0	10157.0	12188.3
Ընդամենը		216763.9	43352.8	54191.0	54191.0	65029.1

Տնօրենի ժամ. պաշտոնակատար Սևեթյան
(ստորագրություն)

(Ալվարո Անտոնյան)

Գլխավոր հաշվապահ Բ. Քոչարյան
(ստորագրություն)



(Սերհինե Բարսեղյան)

Ծրագրի գիտական ղեկավար Սամվել Զախյան

(Սամվել Զախյան)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկերի ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ-ի (հազար դրամ)
1	Գումունալ ծառայություններ, այդ թվում՝	11940.3
	էլեկտրաէներգիայի ծառայություն	6500.0
	գազի ծառայություն	3800.0
	ջրամատակարարման ծառայություն	600.0
	կապի ծառայություն	700.0
	աղբահանություն	340.3
2	Գույք	1500.0
3	Սարքեր և սարքավորումներ	10245.3
4	Նյութեր	3500.0
5	Գործուղումներ	1100.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
	Հրատարակման ծախսեր	56.0
	Այլ ծախսեր	12286.3
Ընդամենը		40627.9

Տնօրենի ժամ. պաշտոնակատար Ա. Աբրահամյան (Ավագոր Անտոնյան)

Գլխավոր հաշվապահ՝ Բ. Աբրահամյան (Մերինե Բարսեղյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝ Ս. Սամվելյան (Սամվել Չախիյան)



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկերի ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը _____ ծրագրի

N	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Պաշտոնը	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը /հազար դրամ/
<i>Վարչապայասարկող անձնակազմ</i>						
1	Անտոնյան	Ալվարդ	Ադիբեկի	Տնօրենի ժ/պ	կ.գ.թ.	400,000.00
2	Չախյան	Սամվել	Գրիգորի	Փոխտնօրեն գիտ. հարց	կ.գ.դ.	150,000.00
3	Հայրապետյան	Հռիփսիկ	Լյուդվիկի	գիտքարտուղար	կ.գ.թ.	250,000.00
4	Ներսիսյան	Ստեփան	Կառլենի	Փոխտնօրեն րնդհ. հարց		170,000.00
5	Բարսեղյան	Սերինե	Հրանտի	Գլխավոր հաշվապահ		250,000.00
6	Շահբազյան	Գեղեցիկ	Պուլբատի	հաշվ-գանձապահ		185,000.00
7	Չերքեզյան	Քրիստինե	Մարատի	կադրերի բաժ պետ		220,000.00
8	Չոփուրյան	Ստանիսլավ	Ռուդոլֆի	ցանց.ադմին		50,000.00
9	Վանյան	Հարություն	Ռաֆայելի	ցանց.ադմին		50,000.0
10	Չերքեզյան	Քրիստինե	Մարատի	իրավաբան		60,000.0

11	Ռաֆաելյան	Նելլի	Արտյոմի	ռեֆերենտ		90,000.0
12	Ներսիսյան	Ստեփան	Կառլենի	պարետ		50,000.0
13	Ավետիսյան	Կարեն	Մանուկի	կենդ.վարիչ		90,000.00
14	Բաբաջանյան	Վահե	Ռուբենի	կենդ.ինամ.		93,000.00
15	Ռաֆաելյան	Կարինե	Արտյոմի	Գրադարան ավար		90,000.00
16	Թանքարյան	Հռիփսիմե	Կարապետի	հավաքարար		90,000.00
17	Մովսեսյան	Մարինա	Ռաֆայելի	հավաքարար		90,000.00
18	Հովհաննիսյան	Լիդիա	Ալեքսանդրի	հավաքարար		90,000.00
19	Բաղդասյան	Աշոտ	Ռազմիկի	հյուսն		90,000.00
20	Գալստյան	Գալուստ	Իլյիչի	սանտեխնիկ		90,000.00
21	Սաֆարյան	Սիրարփի	Վարդանի	կենդ.բանվոր		93,000.00
22	Զաքարյան	Արտաշես	Կառլենի	ինժեներ		103,000.00
23	Խաչատրյան	Գարեգին	խաչատուրի	բանվոր		50,000.00
24	Մանուկյան	Սարգիս	Յուրիկի	էլեկտրիկ		50,000.00
25	Կիրակոսյան	Սարգիս	Դավիդի	Հեռախ. Սպաս.		24,000.00
26	Մարտիրոսյան	Գագիկ	Սեյրանի	Վերելակի մասն.		25,000.00
27	Զաքարյան	Արտաշես	Կառլենի	մատակարար		60,000.00
28	Բարսեղյան	Վահագն	Հովհաննեսի	պահեստապ ետ		46,000.00

Գիտական աշխատողներ

29	Չախյան	Սամվել	Գրիգորի	բաժ վարիչ, գլխ. գի տաշ	կ.գ.դ.	350,000.00
----	--------	--------	---------	------------------------------	--------	------------

30	Աբրահամյան	Սիլվա	Սամսոնի	առաջ.գիտաշխ.	կ.գ.դ.	250,000.00
31	Թումայան	Նարինե	Վաղինակի	ավագ.գիտաշխ.	կ.գ.թ.	200,000.00
32	Սահակյան	Ինեսա	Կամոյի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
33	Քոչարյան	Նունե	Վլադիմիրի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	200,000.00
34	Հովսեփյան	Անիչկա	Սերյոժայի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	50,000.00
35	Մաթևոսյան	Մարգարիտա	Բենիամինի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	100,000.00
36	Հայրապետյան	Գոհար	Ալբերտի	կրտ.գիտաշ		60,000.00
37	Ավետիսյան	Համլետ	Հովհաննեսի	կրտ.գիտաշ		120,000.00
38	Դանիելյան	Քրիստինե	Էդգարի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
39	Պարոնյան	Զոյա	Խաչատուրի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
40	Առաքելյան	Լյուդմիլա	Նիկոլայի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	200,000.00
41	Ստեփանյան	Հասմիկ	Արամայսի	գիտաշխատ.		150,000.00
42	Գրիգորյան	Լուսինե	Ստյոպայի	կրտ.գիտաշ		120,000.00
43	Սիմոնյան	Ռուզան	Մաքսիմի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
44	Սիմոնյան	Մաքսիմ	Արշալույսի	առաջ.գիտաշխ.	կ.գ.դ.	250,000.00
45	Բաբայան	Մադլենա	Ալեքսեյի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	200,000.00
46	Սիմոնյան	Գեղամ	Մաքսիմի	գիտաշխատ.	կ.գ.թ.	100,000.00
47	Գևորգյան	Գևորգ	Արտաշեսի	լաբ.վարիչ	կ.գ.դ.	350,000.00
48	Քնարյան	Վարդուհի	Հարությունի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	200,000.00
49	Բարսեղյան	Վահագն	Հովհաննեսի	գիտաշխատող	կ.գ.թ.	150,000.00
50	Կարապետյան	Գոհար	Ռուբենի	գիտաշխատող	կ.գ.թ.	150,000.00
51	Ալշուշյան	Նինա	Խաչատուրի	առաջ.գիտաշ.	կ.գ.թ.	250,000.00

52	Մովսիսյան	Նինա	Հովհաննեսի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	200,000.00
53	Հովհաննիսյան	Մարգարիտա	Ռոբերտի	գիտաշխատող	կ.գ.թ.	150,000.00
54	Գյուլխանդանյան	Գրիգոր	Վազգենի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
55	Զաքոյան	Աննա	Արթուրի	կրտ.գիտաշ		120,000.00
56	Մկրտչյան	Լուսինե	Վազգենի	կրտ.գիտաշ		120,000.00
57	Աղաբաբովա	Ազնեսա	Աղայի	Խմբի ղեկ.	կ.գ.թ.	230,000.00
58	Անտոնյան	Ալվարդ	Ադիբեկի	լաբ վարիչ	կ.գ.թ.	175,000.00
59	Հայրապետյան	Հռիփսիկ	Լյուդվիկի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	100,000.00
60	Մարդանյան	Սոնա	Սմբատի	առաջ գիտաշ	կ.գ.դ.	250,000.00
61	Շարոյան	Սվետլանա	Գարսևանի	Խմբի ղեկ.	կ.գ.թ.	230,000.00
62	Սարգիսովա	Ելիզավետա	Գրիգորի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	200,000.00
63	Սարգսյան	Էլմիրա	Յուրիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	150,000.00
64	Կարապետյան	Լուիզա	Գագիկի	գիտաշխատող		150,000.00
65	Խաչատրյան	Նարինե	Խաչիկի	գիտաշխատող		150,000.00
66	Խաչատրյան	Հռիփսիմե	Սահակի	կրտ.գիտաշ		120,000.00
67	Բաքարյան	Անահիտ	Կարենի	կրտ.գիտաշ		120,000.00
68	Մարգարյան	Անահիտ	Սամվելի	լաբ.վարիչ		0.00
69	Բադայան	Ռոզա	Բաբկենի	ավագ գիտաշ		150,000.00
70	Գուրոլյան	Մարիամ	Միսակի	կրտ.գիտաշ		120,000.00
71	Սարուխանյան	Ֆլորա	Պետրոսի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
72	Հունանյան	Օվսաննա	Վանիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	75,000.00
73	Զաքարյան	Հերմինե	Հարությունի	գիտաշխատող	կ.գ.թ.	0.00

74	Սեֆերյան	Թորգոմ	Երվանդի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
75	Հարությունյան	Ժասմինա	Էլկանի	գիտաշխատող	կ.գ.թ.	75,000.00
76	Քուրուրտչյան	Նոնա	Սերգեյի	գիտաշխատող		75,000.00
77	Գասպարյան	Վարդան	Կառլենի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	350,000.00
78	Պողոսյան	Գայանե	Գեորգիի	ավագ գիտաշ	կ.գ.թ.	200,000.00
79	Դավթյան	Մարիա	Պավելի	ավագ լաբորանտ		110,000.00
80	Մարուխյան	Սեդա	Սամվելի	կրտ.գիտաշ		120,000.00
81	Հովհաննիսյան	Վարդուհի	Ալբերտի	կրտ.գիտաշ		120,000.00
82	Գյուրջյան	Քրիստինե	Գառնիկի	կրտ.գիտաշ		120,000.00
83	Գրիգորյան	Գոհար	Վազգենի	կրտսեր գիտաշ		120,000.00
84	Մադոյան	Ռոզա	Անուշավանի	ավագ. գիտաշխ.	կ.գ.թ.	150,000.00
85	Սարգսյան	Հակոբ	Հովհաննեսի	ավագ գիտաշխ.		150,000.00
86	Մխիթարյան	Լիանա	Մարտիրոսի	կրտսեր գիտաշ		90,000.00
87	Բարսեղյան	Ջեմմա	Լիպարիտի	կրտսեր գիտաշ		120,000.00
88	Բալազյոզյան	Վալենտինա	Ռուբենի	կրտսեր գիտաշ		120,000.00
89	Բալազյոզյան	Ռիմա	Ռուբենի	կրտսեր գիտաշ		120,000.00
90	Հարոյան	Աննա	Ռաֆիկի	կրտսեր գիտաշ		120,000.00
91	Սարգսյան	Հասմիկ	Հակոբի	կրտսեր գիտաշ		90,000.00
92	Մանուկյան	Արփի	Տիգրանի	կրտսեր գիտաշ		120,000.00
93	Վարդանյան	Ռիմա	Հակոբի	կրտսեր գիտաշ		60,000.00
94	Սուքիասյան	Աննա	Գուրգենի	գիտաշխատող		112,500.00

Ճարտարագիտատեխնիկական անձնակազմ

95	Բարսեղյան	Կարեն	Ռոբերտի	լաբորանտ		51,500.00
96	Գալստյան	Ռաֆայել	Մասիսի	ինժեներ		67,000.00
97	Օհանյան	Նելլի	Արթուրի	ավագ լաբորանտ		110,000.00
98	Օհանյան	Սվետա	Ռաֆիկի	ավագ լաբորանտ		82,500.00
99	Առաքելյան	Լուսինե	Ռաֆայելի	ավագ լաբորանտ		110,000.00
100	Մանուկյան	Լիա	Ատոմի	ավագ լաբորանտ		55,000.00
101	Գիշյան	Ինեսա	Բագրատի	ավագ լաբորանտ		82,500.00
102	Հակոբյան	Աննա	Արմենի	ավագ լաբորանտ		110,000.00
103	Աթոյան	Վահե	Վահագնի	լաբորանտ		67,000.00
104	Մանուցյան	Տաթևիկ	Արմենի	լաբորանտ		51,500.00
Ընդամենը						

Կազմակերպության
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ավարդ Աստուխյան (Ավարդ Աստուխյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ Բրիտինե Չերքեզյան (Բրիտինե Չերքեզյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

